

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Հայաստանի ազգային պատկերասրահում 2018 թվականի սեպտեմբերի 12-15-ը տեղի ունեցավ «Հիշողության կերպարանքները. ձեռագիր և տպագիր ժառանգության պահպանման ու վերականգնման նորագույն տեխնոլոգիաները» խորագրով 8-րդ միջազգային սեմինարը:

Սեմինարին մասնակցում էին ԱՊՀ երկրների, Եվրոպայի, Վրաստանի վերականգնողները, թանգարանագետները և արխիվագետները, բարձր տեխնոլոգիաների մասնագետները:

Սեմինարը ներառում էր վարպետության դասեր, առանձին թեմաներին նվիրված կլոր սեղաններ, շնորհանդեսներ, մշակութային ծրագրեր և այլն: Սեմինարին մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան Հայաստանի ազգային գրադարանի գիտքարտուղար Անի Արդուրյանը և Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի աշխատակից Աննա Հովհաննիսյանը:

